

5.22. 2014 թվականի մարտ ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մարտին օդի միջին ամսական ջերմաստիճանը ողջ հանրապետությունում եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 3-7 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 2-6 աստիճանով և երրորդ տասնօրյակում՝ 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +14 +17°C, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ +11 +14°C, Սյունիքի նախալեռներում՝ +10 +12°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +5 +10°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը ՀՀ Տավուշի մարզում դիտվել է մարտի 5-ին, տարածաշրջանների մեծ մասում՝ մարտի 26-ին, Սյունիքի հովիտներում՝ մարտի 27-ին: Այդ օրերին ՀՀ Տավուշի մարզում գրանցվել է +18 +22°C, Արարատյան դաշտավայրում՝ +20 +23°C, ՀՀ Լոռու մարզում՝ +17 +19°C, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ +14 +16°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +11 +15°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -0.2 -3°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -5.2°C, Մեծ Մասրիկ գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -4.6°C, ՀՀ Տավուշի մարզում, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ 0 +3°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -1.7°C), Արարատյան դաշտավայրում՝ +3 +4°C, Սյունիքի հովիտներում՝ +3 +7°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մարտի 31-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -11 -14°C (Աշոցք գյուղում՝ -18°C), ՀՀ Լոռու մարզում՝ -8 -12°C, Սյունիքի նախալեռներում՝ -8°C, Արագածոտնի նախալեռներում՝ -6 -11°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -3 -4°C (ք.Դիլիջանում՝ -10°C), Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ -2 -4°C:

Ամսական տեղումների քանակը հիմնականում եղել է նորմայից բարձր: ՀՀ Տավուշի մարզում այն կազմել է նորմայի 120-151%-ը, ՀՀ Լոռու մարզում՝ 135%, ՀՀ Գեղարքունիքի և Շիրակի մարզերում՝ 100-168% (Արթիկ գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 114%), ՀՀ Կոտայքի մարզում՝ 133-159%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 113-164%, Արարատյան դաշտավայրում՝ 102-184%: Որոշ կայաններում (Օձուն, Ստեփանավան, Տաշիր, Գյումրի, Ամասիա, Աշոցք, Արմավիր, Թալին, Անանուս լեռնանցք) տեղումների քանակն եղել է նորմայից ցածր 23-62%-ով:

Մարտի 10-ին, 16-ին և 19-26-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Մարտի 1-3-ին և 12-14-ին առանձին վայրերում, 5-ին, 7-8-ին, 11-ին, 17-ին և 27-31-ին, տարածաշրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Մարտի 1-ին, 4-ին, 7-ին, 9-10-ին, 13-ին, 18-19-ին, 22-25-ին և 27-ին առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Մարտի 1-6-ին, 11-17-ին, 20-21-ին և 28-30-ին

տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-18 մ/վրկ, պոռթկումները՝ 20-28 մ/վրկ:

Մարտի 10-ին ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է ուժեղ անձրև 20 մմ/12 ժամ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 23 մմ/24 ժամ: Մարտի 30-ին ք.Ապարանում դիտվել է բուք (տեսանելիությունը՝ 200 մ), ք.Երևանի բարձրադիր շրջաններում, ք.Իջևանում և ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ), ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), ք.Սևանում, ք.Մարտունիում և Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), ք.Հրազդանում և Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ), Ծաղկահովիտ գյուղում (ՀՀ Արագածոտնի մարզ), Մերձավան գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ), ք.Գորիսում և ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ) դիտվել է ուժեղ ձյուն 22-31 մմ/12 ժամ:

Մարտի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3 229 մ) կազմել է 117 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 76 սմ, Սեմյոնովկա գյուղում՝ 57 սմ, ք.Հրազդանում՝ 37 սմ, ք.Մարտունիում՝ 35 սմ, ք.Երևանի բարձրադիր շրջաններում, ք.Դիլիջանում, ք.Սևանում և Ֆանտան գյուղում՝ 30 սմ, ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 28 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ) և Մեծ Մասրիկ գյուղում՝ 24 սմ, մնացած շրջաններում՝ 8-15 սմ:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 60-90%-ը, առանձին դիտակետերում (գետ Քասախ (դիտակետ՝ Աշտարակ), գետ Հրազդան (Լուսակերտ), գետ Արգիճի (Վերին Գետաշեն), գետ Մարտունի (Գեղհովիտ), գետ Գավառագետ (Նորատուս), գետ Արփա (Արենի), գետ Մեղրիգետ (Մեղրի), գետ Ծղուկ (Ծղուկ), գետ Գորիսգետ (Գորիս))՝ 110-135%, իսկ որոշ դիտակետերում (գետ Սևջուր (Էջմիածին), գետ Ախուրյան (Ամասիա), գետ Ողջի (Կապան), գետ Որոտան (Գորայք)) եղել է նորմայից ցածր՝ 20-50%-ով:

Սևանա լճի մակարդակը մարտ ամսվա ընթացքում բարձրացել է 4 սմ-ով և մարտի 31-ի դրությամբ կազմել 1 900.24 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ բարձր է 6 սմ-ով: